պէտք այս ՚ի թագաւորեալ քաղաքն, խոովեցան առ հասարակ ժողովուրդք Հայոց, և մասուցին գիր աղաչանաց ՚ի Դուռն՝ բողոք բարձեալ ասէին, եւելի քան զ300 ամս ամենայն քրիստոնէից ՚ի միասին հաւատարութեամբ պաշտէին զՍ. Տեղիս. այժմ զի՞ եղեւ Լատինաց, և ուստի՞ ծնաւ ՚ի միտս նոցա այսպիսի անէծ սիրապետութեան, տարօրինակ բռնութեամբ յափշտակել զերաւունս այլոց։ Գրեալ էր և վասն այսր յառաջագոյն ձաւիէր աղա ՚ի խնդրոյ Հայոց առ Արքայ, որ ՚ի նմին ժամանակի վերատեսուչ էր արքունի կալուածոց յերուսաղէմ, թէ ո՞րպիսի սիրապետութեան տենչանօք բռնացեալ են Լատինք ՚ի վերայ Հայոց, և թէ խոովութիւնք նոցին առիթ լինին մեծամեծ չարեաց, և հատանել զնաս գանձուն, եթէ ոչ հաւատարութեամբ պաշտեսցեն զՍ. Տեղիս, որպէս յայտ առնեն հանրագրութիւնք, և վճիռ մեծի դեղպետին առաքեալ յոտս ձեր։ Այս ամենայն բողոք և գանգատանք՝ եհաս յականջս Արքային. հրամայեաց եղեւ գրել հրովարտակ՝ վարիլ ըստ վճռոյ դեղպետին, և մնաց Արքունի հրովարտակաց և վաղեմի սովորութեանց, զամենայն որ ինչ միանգամ յափշտակեալ են Լատինք, դարձուցանել առ Հայս և չնեղել զնոսա, հաւատար վարիլ ՚ի Ս. Տեղիս, և զանհնազանդն ծանուցանել ՚ի Դուռն. ՚ի \ձեմապիլ հվվլ. ՌՃՀ (1621)։

Վանք Յովհաննու Ծննդեան ՚ի լեռնակողմն՝ է հեռի երկու ժամաւ յերուսաղէմ, զորմէ ասեն Լատինք լինել առն Զաքարիայ Քահանայապետի, եկեղեցին չինեալ ՚ի ձեւ եկեղեցեացն Հայոց 3 խորանաւ, ՚ի ներքոյ հիւսիսային խորանին ցուցանեն զտեղի ծննդեան Յովհաննու կարապետին, ՚ի հալածիլ անաւ կրօնաւորացն Հայոց ՚ի բռնութենէ Մ-ւէրէն կոչեցեալ Արարացւոց՝ վանքն մնաց ամայի, և եկեղեցին լեալ էր գոմ ոչխարաց և մակաղատեղի խաշանց գիւղական Արաբացւոց։ Եւ ՚ի սմին ժամանակի Լատին կրօնաւորք գնացին անդ առնել նախատօնակ յաւուր տօնի սրբոյն. բայց պաշարեցան գինուք յԱրաբացւոց՝ և խնդրէին սպանանել զնոսա, և նոքա հաղիւ ուրեմն զերծեալ անաւ թաքեան ՚ի տունս ուրեք, մինչեւ եկին գինուորք՝ և աւետալ տարան զնոսա յերուսաղէմ (1621)։ Եւ յայնմհետէ սովորութիւն կալան Լատինք՝ երթալ անդ ՚ի տարւոջ մի-